ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 626 - Ա

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՍՊԱՆԴԱՐՅԱՆ» ՋՐԱՆՑՔԻ ՎԵՐԱԿԱ-ՌՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բարեգործության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերը՝

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 518,546,727 դրամ ընդհանուր արժողությամբ «Սպանդարյան» ջրանցքի վերակառուցում» ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականաց-ման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Մեդիսոն Էյբլ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 01012522) 2025 թվականի օգոստոսի 25-ին կնքված՝ ՀՀ/Ջ-01/25 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ջրանցքի վերակառուցման շինարարական աշխատանքների իրականացում՝ 510,380,637 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Ձրտուք» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 01218107) 2025 թվականի օգոստոսի 25-ին կնքված՝ ՀՀ/ՀՀ-08/25 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ջրանցքի վերակառուցման շինարարական աշխատանքների հեղինակային հսկողության ծառայությունների մատուցում՝ 3,062,284 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «ՀԱԼԴԻ Քոնսալթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 08417251) 2025 թվականի օգոստոսի 25-ին կնքված՝ ՀՀ/ՏՀ-07/25 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ջրանցքի վերակառուցման շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցում՝ 5,103,806 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից կատարված աշխատանքների, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

24.09.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ